ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1958 Общественные науки

Մ. Մազմանյան

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԸ՝ ՔԱՂԱՔԱՇԻՆԱՐԱՐ

Ժողովրդական ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը Հայաստանի սովետական ճարտարապետության հիմնադիրն է։ Նրանից է սկսվում հայ նորագույն ճարտարապետությունը, նրա ստեղծագործություններն են լրացնում այդ ճարտարապետության պատմության առաջին էջերը։ Նա հարստացրել է հայ ճարտարապետության գանձարանը նորանոր գոհարներով։

Թամանյանը զգալի հետք է թողել նաև մինչհոկտեմբերյան Ռուսաստանի ճարտարապետության պատմության մեջ։

Դժվարին գործ է ներկայումս տալ մեծ արվեստագետի լիակատար նկարագիրը. անհրաժեշտ է որոշ հեռավորություն՝ ընդգրկելու համար այն վիթխարի գործը, որ կատարել է նա իր փայլուն կյանքի ընթացքում։

Թամանյանը խոշոր դիապազոնի, էպիքական ստեղծագործ ուժի տեր ճարտարապետ էր, ուներ որոնող միտք, մեծ պրոբլեմներ լուծելու կարողություն։ Թամանյանը ճարտարապետության բոլոր բնագավառներում տվեց խոշոր, անկրկնելի երկեր — և քաղաքաշինարարության, և բնակելի ու հասարակական շենքերի, և արդյունաբերական շինարարության մեջ։

Ես ուզում եմ համառոտակի կանգ առնել Թամանյանի գործունեության վրա որպես քաղաքաշինարարի, և պարզել նրա դերը մեր շինարարության ճիշտ սկզբնավորման գործում։

Թամանյանի ստեղծագործության մեջ քաղաքաշինարարությունն ունի իր ուրույն տեղը։ Երբ նա առաջին անգամ տեղափոխվեց Հայաստան՝ ձեռնամուխ եղավ ամբողջ քաղաքների և ավանների հատակագծման աշխատանքներին, այսինքն՝ իր գործունեությունը սկսեց իբրև քաղաքաշինարար։

Եվ սա պատահական երևույթ չէր։

Մինչև այդ Թամանյանն ուներ զգալի փորձ և հմտություն այդ բնագավառում, որ ձեռք էր բերել մինչհոկտեմբերյան Ռուսաստանում, որտեղ և ստացել էր իր մասնագիտական կրթությունը՝ սնվելով ռուս դասական ճարտարապետության ավանդներով։ Պետերբուրգն իր դասական անսամբլներով, հոյակապ հրապարակներով ու պողոտաներով դաստիարակել էր Թամանյանի ճաշակը և զարգացրել նրա մեջ քաղաքաշինարարական մոտեցում դեպի ճարտարապետական խնդիրները։

Առաջին խոշոր աշխատանքը, որտեղ լիովին դրսևորվում է Թամանյանի տաղանդը որպես քաղաքաշինարարի՝ դա իշխան Ուշերբատովի տունն է Մոսկվայում Նովինսկի բուլվարի վրա (այժմ Չայկովսկու փողոց)։ Այստեղ Թամանյանը կարողանում է սովորական բնակելի տան ճարտարապետությանը տալ քաղաքաշինարարական իմաստ։ Հողի մասնավոր սեփականության պայմաններում, շենքին հատկացված նեղ հողամասի վրա, սահմանափակ և հարևանների միջև սեղմված կառուցվածքը ստանում է հստակ քաղաքաշինարարական հիմունքներ։ Շենքի դրվածքը փողոցի նկատմամբ «Н» տառի գծագրու-

թյամբ՝ հնարավորություն է տալիս դեպի հողամասի ներսն աճող բարձրություն ստեղծել բնակելի կորպուսներից՝ լավագույն լուսավորություն տալու համար բնակարաններին։ Իր ժամանակի եկամտավոր շենքերին հատուկ փակ բակեր-ջրհորներից ազատվելու համար՝ ճարտարապետը Շչերբատովի շենքին հատկացնում է երկու լուսավոր բակ — մեկը տնտեսական կարիքների համար, որն ընկնում է հողամասի խորքում, իսկ մյուսը՝ հանդիսավոր բակը — պարտեզով ու շատրվանով զարդարված՝ դիմադարձ է լինում դեպի լայնարձակ բուլվարը։ Այս եզակի գործում Թամանյանը խոշոր բնակելի շենքի ճարտարապետությանը մոտենում է որպես քաղաքաշինարար։

Շչերբատովի տունը հանդիսացավ XX դարու սկզբի ռուսական ճարտարապետության լավագույն նմուշներից մեկը և իր արժանի տեղը գրավեց ռուս առաջավոր վարպետների՝ Շչուսևի, Ժոլտովսկու, Ֆոմինի և Շչուկոյի գործերի կողքին։ Ռուս ճարտարապետության այդ փայլուն սերնդին էր պատկանում և ինքը Թամանյանը։

Թամանյանի այդ շենքն արժանացավ մրցանակի՝ 1914 թ. Մոսկվայում լավագույն շենքերի համար հայտարարված կոնկուրսում։ Այդ շենքի համար երեսունվեց տարեկան Թամանյանին Գեղարվեստների Ակադեմիան ընտրեց ճարտարապետության ակադեմիկոս։

Շչերբատովի տնից հետո, նույն 1913 թ., Թամանյանը ձեռնարկեց մի ուրիշ հատակագծային աշխատանքի։ Դա Յուզադրական շուկայի նախագիծն էր, որ իրականացվեց ռուսական հնագույն Յարոսլավլ քաղաքում։ Այս ամբողջ կոմպլեքսը Թամանյանը նախագծեց և կառուցեց հին ռուսական տոնավաճառներին հատուկ առևտրական հրապարակի տեսքով։

Թամանյանը, որ մինչ այդ հայտնի էր որպես ռուսական դասական ճարտարապետության քաջածանոթ մի արվեստագետ, այդ գործում իրեն ցուցաբերեց իբրև ռուսական ժողովրդական ճարտարապետության հմուտ ճանաչող։

Զարմանալի վարպետությամբ Թամանյանը կարողացավ վերստեղծել ռուսական ժողովրդական արվեստի հնքիաթային և գունագեղ ձևերով կառուցվածքներ, որոնք, համախմբված մի հրապարակի շուրջ, կազմում էին հրճվալից և զվարթ ամբողջական մի անսամբլ։

Թամանյանը խորապես ըմբռնել էր ռուս ժողովրդական արվեստի հմայիչ կողմերը և ստեղծագործական վերամշակումով արտահայտել այն ժողովրդական ոգով տոգորված կերտվածքներում։

Թամանյանի հաջորդ քաղաքաշինարարական քայլը հիվանդանոցային խոշոր կոմպլեքսի հատակագծումն էր Կրատովի կայարանի պուրակում Մոսկվա-Կազան երկաթուղու ծառայողների համար։ Ամբողջ այս կոմպլեքսը տեղավորված է գեղատեսիլ և առողջապահիկ մի վայրում, երկու գետերի բաժանման հանգույցում։ Այս շինարարությունն սկսվել էր 1913—14 թթ. ու ավարտվել 1923 թվականին։

Մի շարք շենքերից բաղկացած այս կոմպլեքսը Թամանյանը հղացել է մեծ թափով, իբրև ներդաշնակ մի անսամբլ, որպես օրգանական մի ամբողջություն, որտեղ բոլոր մասերը համաձայնեցված են իրար հետ։ Ամեն մի շենք ստացել է յուրօրինակ ճարտարապետական լուծում և իր հատուկ տեղն է գտել շենքերի ընդհանուր համակարգության մեջ։ Ճարտարապետական զուսպ ձևերով Թամանյանը հասնում է անսամբլային ճարտարապետության զորեղ ազդեցության։

Ողջ կոմպոզիցիայի գլխավոր առանցքն սկսվում է հենց հիվանդանոցային կոմպլեքսի մուտքից ու անցնում հողամասի կենտրոնով դեպի նրա խորքը։ Ըստ այս առանցքի են դասավորված հիվանդանոցային կորպուսները և նրան լն ենթարկվում երկրորդական նշանակություն ունեցող կոմպոզիցիոն մյուս առանցքները։

Այսպիսով, իր գործունեության առաջին իսկ քայլերից Թամանյանը ունեցել է քաղաքաշինարարական մոտեցում՝ առաջադրված ճարտարապետական խնդիրները լուծելիս։

Ինչքան էլ խոշոր լիներ Թամանյանի ստեղծագործական կորովն-ու եռանդը, այնուամենայնիվ, կապիտալիստական հասարակարգի անձուկ պայմաններն իրենց շինարարական անարխիայով չէին կարող նպաստավոր հող ստեղծել նրա տաղանդի զարգացման համար՝ իբրև քաղաքաշինարարի։

Միայն մեր օրերում, Մեծ Հոկտեմբերից հետո, երբ Թամանյանը որպես կազմակերպված ու շինարարական մեծ փորձ ունեցող ճարտարապետ վերադառնում է Հայաստան, նա կերտում է իր խոշորագույն երկերը, մշակում է խոշոր քաղաքաշինարարական պրոբլեմներ, որոնք նույնիսկ չէին կարող առաջանալ ցարական Ռուսաստանի պայմաններում։

Թամանյանը առաջին անգամ Հայաստանում ձեռնարկեց ամբողջ քաղաքների և ավանների հատակագծման աշխատանքներին։ Նա հասկանում էր, որ շինարարությունը պետք է կատարել միասնական պլանով, և մեկը մյուսի հետևից Թամանյանը կազմում էր մի շարք շրջանային քաղաքների հատակագծեր, ինչպես, օրինակ, Վաղարշապատի, Աշտարակի, Նոր Բայազետի, Լուկաշենի, Ախտալի և ուրիշների։

Սակայն Թամանյանի քաղաքաշինարարական ամենախոշոր գործն եղավ Հայաստանի մայրաքաղաք Երևանի հատակագիծը, որի վրա նա աշխատել է 1923 թվականից սկսած մինչև իր կյանքի վերջին օրերը՝ անընդհատ հղկելով այն, համաձայն մեր հարաճուն կյանքի առաջադրած պահանջների։

Հայաստանում է, որ ծաղկում են Թամանյանի կարողությունները, որպես քաղաքաշինարարի։ Իսկական ճարտարապետի իր բնազդով՝ Թամանյանը հասկացավ, որ նոր հասարակարգի ճարտարապետությունը պետք է սկսվի քաղաքաշինարարությունից։ Սոցիալիստական պլանայնությունը՝ դա հիմքն է մեր նոր հասարակարգի և նրա շինարարության՝ ի հակակշիռ նախկին դասակարգային ճարտարապետության մեջ իշխող շինարարական անարխիային և պատահականությանը։

Ամեն մի հասարակարգ ստեղծում է իր քաղաքը համաձայն իր պատկերի և իր նմանության։ Մի հասարակական ֆորմացիայի պայմաններում ստեղծված քաղաքը տարբերվում է մի ուրիշ ֆորմացիայում ստեղծված քաղաքից իր բովանդակությամբ և ձևով։

Սակայն կա հաջորդակցություն (преемственность) նաև այս ասպարեզում։ Մի քաղաք, ծնված հասարակական այլ պայմաններում, ժառանգություն է մնում մյուսին՝ նոր հասարակարգին, որն իր կենցաղն սկսում է կազմակերպել հին քաղաքի ձևերում, որոնք տակավին չեն համապատասխանում նորի բովանդակությանը։ Այս դեպքում նա քանդում է հին ձևերը և այդ հնի քննադատական վերամշակմամբ ստեղծում է նոր ձևեր՝ համաձայն իր պահանջների։

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ

Նկ. 1. Հին Երևանի հատակագիծը

Անցյալի դասակարգային հասարակությունների քաղաքներին, չնայած իրենց տարբեր ձևերին, հատուկ են որոշ գծեր՝ իրար հակոտնյա կողմեր. օրինակ՝ կենտրոն և ծայրամասեր, պալատներ և նկուղներ, շքեղություն և աղքատություն, այսինքն՝ քաղաքներ են, որոնք կառուցված են որոշ դասակարգերի համար։

Սոցիալիստական քաղաքն ունի բոլորովին այլ բովանդակություն՝ տրամագծորեն հակառակ նախկին քաղաքներին. դա նրա համաժողովրդական բնույթն է, քաղաք՝ ամբողջ հասարակության համար։ Այս հանգամանքն իր խոր կնիքն է դնում սոցիալիստական քաղաքի հատակագծման ողջ սիստեմի վրա։

Ճարտարապետությունը որպես տարածական արվեստ, որ կոչված է կազմակերպելու նյութական, իրական ձևերի մեջ մեր արտադրությունը, կենցաղը, հանգիստը, առավել շոշափելի արտահայտվում է քաղաքաշինարարության մեջ։ Փողոցները, հրապարակները, բնակելի թաղամասերը, բակերը, պարտեզ-

ները շրջապատում են մարդուն, կազմակերպում են նրա կենցաղը և աղդում նրա հոգեբանության վրա։

Այստեղից էլ քաղաքաշինարար-ճարտարապետի խոշոր դերը մեր հասարակարգում, որտեղ կյանքի են կոչվում ոչ թե առանձին անհատների ու շերտերի համար կառուցվող շենքեր, այլ ամբողջ հասարակության կարիքները բավարարող մասսայական նշանակություն ունեցող վիթխարի շինարարություն։

Ահա քաղաքաշինարարության այս կարևոր դերն անտեսվել է շատերի կողմից անցյալում և անտեսվում է մեր օրերում՝ ոմանց կողմից։

Թամանյանը հենց սկզբից լավ ըմբռնեց իր առջև ծառացած խնդիրների լրջությունը և իր պատմական դերը. նա հասկացավ, թե ի՞նչ են պահանջելու իրենից գալիք սերունդները և հնարավորի սահմաններում ճիշտ դրեց մեր քաղաքաշինարարության հիմքերը։ Դա այն ժամանակն էր, երբ դեռ նոր էին կազմվում Մոսկվայի և Լենինգրադի հատակագծերը, և մեր Միության ոչ մի քաղաք դեռ չուներ իր նախագիծը։

Ի՞նչ ստացավ նա ժառանգություն ավերակ մեր երկրում, ուր եկել էր նա ինքնակամ՝ ի սպաս դնելու արվեստագետի իր փայլուն ձիրքը, գիտելիքների հոյակապ պաշարը։

Երևանը, Անդրկովկասի մյուս քաղաքների նման չուներ բնակարանային հարուստ ֆոնդ, հասարակական շենքեր, բարեկարգված փողոցներ։ Երևանը իբրև գավառական հետամնաց մի քաղաք 30—35 հազարանոց ազգաբնակչությամբ, կառուցված առավելապես մեկ-հարկանի հողաշեն տներով, նեղ փողոցներով, ծուռ ու մուռ փակուղիներով և հակասանիտարական իր թաղամասերով ու բակերով՝ տաղտկություն ու հորանջ էր առաջացնում ապրողների ու եկվորների մեջ։

Թամանյանը նախ և առաջ ուսումնասիրեց քաղաքի տեղադրությունը, ռելեֆը, կլիմայական պայմանները, տիրապետող քամիների ուժն ու ուղղությունը, գոյություն ունեցող փողոցներն ու տները, որ տակավին կարելի էր պահել նոր հատակագծի մեջ, և ապա կազմեց իր նոր Երևանի հատակագիծը։

Քաջ ծանոթ լինելով համաշխարհային քաղաքաշինարարության փորձին, նա մեխանիկորեն չի վերցրել այս կամ այն հատակագծման ձևը և կիրառել, այլ, ելնելով միջավայրի կոնկրետ պայմաններից, նրա խորազնին ուսումնասիրությունից՝ ստեղծել է նոր Երևանի ուրույն նախագիծը՝ ձևված ու պատրաստված տեղի կաղապարի վրա։ Այս իմաստով Թամանյանը հանդես բերեց իրեն որպես ռեալիստ ճարտարապետ։

Թամանյանի այդ առաջին հղացումը, որ հաստատվեց Հայաստանի կառավարության կողմից 1924 թ., հետզհետե կատարելագործվեց հեղինակի կողմից, մեր քաղաքի զարգացման հետ զուգընթաց, մինչև վարպետի կյանքի վերջին օրերը։

Նախագիծը կոմպլեքսային լուծում է հանդիսանում մի շարք բազմազան ու դժվարին խնդիրների, արմատական վերակառուցումն գոյություն ունեցող քաղաքի՝ իր խիտ կառուցապատումով, իրար կպած շենքերով, պտղատու այգիներով։ Այս հանգամանքը որոշ չափով կաշկանդում էր նախագծումը և բարդություններ ստեղծում քաղաքի վերակառուցման համար։

Թամանյանն իր նախագծում պահպանեց գոյություն ունեցող մի շարք փողոցներ — Աբովյան, Նալբանդյան և ուրիշներ, որոնք ճիշտ դիրքավորում ունեին արևահայեցողության տեսակետից։ Եվ հին, փոշեթաթավ տնակների ու

Նկ. 2. Նոր Երևանի հատակագիծը 1924—32 թթ.

նեղլիկ, ծուռումուռ փողոցների վրա իր կորեղ ձևերով գծեց ու ձևեց Նոր Երևանի պայծառ դեմքը։

Ելնելով քաղաքի ռելեֆից ու տիրապետող քամիների ուղղությունից՝ Թամանյանը ճիշտ տեղադրեց քաղաքի սահմաններում բնակարանային մասը արդյունաբերականի նկատմամբ։ Նշեց քաղաքի հետագա զարգացման հնարավոր ուղղությունը — դեպի հյուսիս՝ Քանաքեռի հարթավայրը բնակարանային շինարարության համար, և դեպի հարավ՝ Արարատյան դաշտը՝ արդյունաբերական շինարարության համար։

Քաղաքի հատակագծման մեջ Թամանյանը լուծել է և շինարարական, և կենցաղային, և տրանսպորտի, և էսթետիկական խնդիրները, լուծել է կոմպլեքսային ձևով, միաժամանակ՝ առանց առաջնություն տալու դրանցից որևէ մեկին։ Բոլորն էլ հավասարաչափ անհրաժեշտ են լիակատար քաղաքի նորմալ գործունեության համար։

Նկ. 3. Նոր Երևանի կենտրոնը

Նկնելով քաղաքի ռելեֆից՝ նա վարպետորեն օգտագործում է այն՝ ներգծելով շրջակա բլուրների ամֆիթատրոնի սահմաններում քաղաքի ընդհանուր պարագիծը, տեսարաններ բանալով դեպի Արարատյան դաշտը՝ հեռանկար ունենալով վեհանիստ Մասիսը։ Ռելեֆի հոյակապ օգտագործման մի այլ օրինակ պետք է համարել թանգարանային թաղամասը Կոնդի բլրի վրա, որպես բնական մի վիթխարի պատվանդանի վրա խոյացող կառուցումների մի հսկա կոմպլեքս։

Հատակագծի շրջանաձև կոմպոզիցիան, որ արդյունք է ռելեֆի ճիշտ հաշվառման, միաժամանակ նպատակ ունի քաղաքի զանազան մասերն իրար կապել լայն բուլվարով։ Քաղաքի կենտրոնը կազմում է այն տերիտորիան, որն իր մեջ ունենալով Լենինի անվան հրապարակը՝ համախմբում է բոլոր մինիստրությունները, Երևանի Գործկոմը, Մինիստրների Սովետը, Կուլտուրայի տունը։ Սա ադմինիստրատիվ կենտրոնն է։

Հարավարևելյան ուղղությամբ հատկացված հողամասի վրա է գտնվում առևտրական բաժինը, կենտրոն ունենալով շուկան, որի շուրջը համախմբվում են կոոպերատիվները, ունիվերսալ խանութները, ծածկված շուկան, պահեստները, ավելի հարավ, երկաթգծի ուղղությամբ, դասավորվում են պետական ապրանքային պահեստները, սառցարանները և հացի գործարանը։

Քաղաքի հյուսիսարևելյան բարձրադիր և առողջապահիկ մասում, հիսուն հեկտար մակերեսի վրա, տեղ է հատկացված բարձրագույն ուսումնական հաստատությունների արվարձանին։ Քաղաքի կենտրոնից ոչ-հեռու, դեպի հյուսիս, 350 մ. հեռավորության վրա, նախագծվում է կուլտուրական և գեղարվեստական հաստատությունների շրջանը — Պետական թատրոնը, Թատերական ար-

Նկ. 4. Համալսարանական թաղամասի հատակագիծը

վեստի ինստիտուտը, Գեղարվեստական դպրոցը, Կոնսերվատորիան, որոնք համախմբվում են թատերական հրապարակի պարտեզի շուրջը։

Քաղաքի հյուսիսարևելյան մասում, բարձրագիր տափարակի վրա, տեղավորվում է հանրապետական ստադիոնը։ Մյուս ստադիոնը տեղ է գտնում քաղաքի հարավարևելյան մասում, գլխավոր պողոտայի վերջում՝ արդյունաբերական շրջանի մոտ։

Այս բոլորը արբանյակների նման շրջապատում են քաղաքի կենտրոնը և բնակելի թաղամասերը՝ վերայնելով կենտրոնի և ծայրամասերի հակադրություններ։

Նախատեսվում են երեք տիպի փողոցներ. մայրուղիներ, պողոտաներ, ապրանքատար, տրանզիտ երթևեկության համար, բնակելի շրջանների փողոցներ, որոնցով արգելվում են մեծ շարժումներ, և կանաչապատ փողոցներ հետիոտն շարժումների համար։ Կանաչի գլխավոր զանգվածները կենտրոնացված են բուլվարների վրա, որ օղակաձև գրկում են քաղաքի կենտրոնական մասը։ Այս օղակաձև բուլվարները երկու կողմից մոտենալով Կոմունարների այգուն՝ միաժամանակ սպասարկում են և կենտրոնը, և ծայրամասերը։

Զանգվի գեղատեսիլ ձորում, որձաքար ժայռերի ֆոնի վրա, գծագրվում է Կուլտուրայի և հանգստի պարկը։ Իսկ քաղաքի հյուսիսային մասում, ընդարձակ տարածության վրա, նախատեսվում է հանգստի պուրակ, որը ընդգրկում



Նկ. 5. Գեղարվեստի հաստատությունների շրջան

է քաղաքը շրջապատող բլուրների լանջերը։ Այս պուրակը կասկադով և աստիճանաձև բուլվարներով միանում է Գեղարվեստից արվարձանի հետ։

Քաղաքի օդին խոնավություն հաղորդելու և տոթը մեղմացնելու համար նախատեսված է ավազաններ, շատրվաններ կառուցել՝ հավասարապես բաշխելով այն քաղաքի ողջ տերիտորիայի վրա։

Ահա քաղաքի բովանդակությունը։

Այսպիսով, Թամանյանը քաղաքի բովանդակությունը որոշելիս՝ ֆունկցիոնալ դասավորեց ժողովրդի կենցաղի զանազան հարմարությունները, ըստ

իրենց պատշաճ տեղի, դիրքավորման, համախմբելով ըստ տեսակների, հանդես բերեց անսամբլային մոտեցում ու տվեց անսամբլային շինարարության փայլուն նմուշներ։

Անսամբլը ճարտարապետական ներդաշնակության, հարմոնիայի գերագույն աստիճանն է, որը կարելի է իրականացնել փողոցի, հրապարակի, բնակելի թաղամասի ամբողջական լուծումով։ Բարեկազմ կոմպոզիցիոն մի սիստեմ է այն, որտեղ օրինաչափ և հետևողականորեն զարգանում է միասնական ճարտարապետական մի գաղափար։

Երևան քաղաքի անսամբլի հիմնական գաղափարները նախատեսված են Թամանյանի կողմից քաղաքի հատակագծի մեջ՝ վերջինիս գոյացման առաջին իսկ օրից։ Դրանք են՝ ա) Լենինի հրապարակը, բ) Թատրոնական հրապարակը, գ) Համալսարանի թաղամասը, դ) Թանգարանային կոմպլեքսը և այլն։

Լենինի հրապարակի ճարտարապետական դեղարվեստական վերլուծությունը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք դասական արվեստի սկզբունքներով նախագծված մի անսամբլի հետ։ Հրապարակի ձևը, նրա կողմերի հարաբերությունը, շենքերի բարձրությունը և նրանց հարաբերությունը հրապարակի մակերեսի նկատմամբ՝ այդ հրապարակը դարձնում են մեր Միության լավագույն հրապարակներից մեկը։

Նույնը կարելի է ասել Համալսարանի թաղամասի անսամբլի մասին՝ Ղուկաս Ղուկասյանի անվան պուրակով, կենտրոնում ունենալով Աստղադիտարանի շենքը, շրջապատված ուսումնական հաստատություններով և ընդհանուր այս կոմպլեքսի դիմադարձով դեպի Արովյան փողոցը։

Նշելով քաղաքի հատակագծման հիմնական հանգույցները՝ Թամանյանը ձեռնամուխ եղավ միաժամանակ առանցքային նշանակություն ունեցող կառուցումների նախագծման — Ժողտան (Օպերայի և բալետի շենքը), Կառավարական տան, ուսումնական հաստատությունների՝ ֆիքսացիայի ենթարկելով իրականում քաղաքի հատակագծի կարևոր օղակները։

Այս շենքերի ճարտարապետական լուծումները ելնում են անսամբլային գաղափարներից և իրենց հերթին ազդում են նրանց վրա։ Փոխադարձ այս ազդեցության հետևանքով Թամանյանը զարգացրեց նախկին Հողժողկոմատի երկհարկանի շենքը, որն իր բարձրությամբ աննկարագրելի էր լայն հրապարակի նկատմամբ, ու դարձրեց եռահարկ Կառավարական տուն իր աշտարակներով և վերին հարկի սյունաշարերով։ Թամանյանի քաղաքաշինարարական մոտեցման հետևանքով ստեղծվեց հրապարակը ձևավորող առաջին հասարակական շենքի կերպարը, որը ելակետ հանդիսացավ հրապարակի մյուս շենքերի ճարտարապետական մշակման համար։

Որ նախագծած բոլոր շենքերը Թամանյանը դիտում էր որպես քաղաքի կոմպլեքսի օրգանական մի մասը՝ կապելով այն քաղաքի ճարտարապետական ընդհանուր գաղափարի հետ։ Այսպիսով, միահյուսվում են իրար շենքերն ու քաղաքաշինարարական խնդիրները և փոխադարձաբար լրացնում իրար։

Երևան քաղաքի նախագիծը օրգանական ամբողջական մի լուծում է մեկ շնչով արված։ Նա ներկայանում է մեզ որպես ամբողջական ճարտարապետական մի հորինվածք՝ էպիքական ուժի ու թափի։ Նա եղավ նոր խոսք Հայաստանի ճարտարապետության պատմության մեջ։

Հայ ճարտարապետության պատմության մեջ Ալեքսանդր Թամանյանին, իր ունեցած դերով ու նշանակությամբ, կարելի է համեմատել Տրդատ ճար-

Նկ. 6. Կառավարական տուն Լենինի հրապարակի վրա. 1928 – 1941 թթ.



Նկ. 7. Սովետաշեն ավանի ընդհանուր հատակագիծը

տարապետի հետ։ X—XI դարերի ճարտարապետության ծաղկման հիմնադիրը հանդիսացավ Տրդատը, որը միաժամանակ Անի քաղաքի շինարարության ղեկավարն էր։ Մի շարք աղբյուրների հիշատակություններից, ինչպես և այդ շրջանի հուշարձանների պատմական-ճարտարապետական վերլուծությունից կարելի է կռահել, որ բազմաթիվ կոթողներ, որոնք կանգնեցված են այդ ժամանակաշրջանում, աներկրա կրում են Տրդատի արվեստի կնիքը և նրա հետևողությամբ են կառուցված, այնպես որ կարող են իրավամբ Տրդատի ճարտարապետական դպրոցի գոյությունը հաստատել։ Խնդիրների լուծման քաղաքաշինարարական մոտեցումը — կառուցվածքների տեղադրումը քաղաքի տերիտորիայի վրա ըստ իրենց նշանակության, պարիսպների, քաղաքի գլխավոր հրապարակի և փողոցների դասավորությունը և փոխադարձ կապը միջնաբերդի ու կամուրջների հետ՝ ցույց են տալիս մի հզոր ձեռքի ղեկավարություն, որ եղել է Տրդատ ճարտարապետի ձեռքը։



Նկ. 8. Լուկաշին գյուղատնտեսական մանկական ավան. 1926 թ.

Այդ է պատճառը, որ Անի քաղաքն իր կոմպոզիցիոն միասնությամբ ու քաղաքի կենտրոնի անսամբլային լուծումով հիացմունք է պատճառել ժամանակակիցներին և շարունակում է պատճառել ներկայումս ավերակ վիճակում ևս՝ չնայած նրանց կառուցման օրից հազարից ավելի տարիներ են անցել։

Միևնույն դերը վիճակվեց կատարել մեր օրերի համար Ալեքսանդր Թամանյանին։

Խոշոր է և անգնահատելի Թամանյանի նշանակությունը հայ ճարտարապետության համար։ Թամանյանի գործունեության այս կողմը առանձին արժեք է ստանում ու դառնում է ուսանելի մեզ համար առավելապես հիմա, երբ Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը դրել են մասսայական շինարարության խնդիրները խոշոր ծավալով, երբ անհրաժեշտ է դառնում հոգալ ոչ թե հատ-հատ շենքերի կառուցման հարցերը, այլ ամբողջ-

ջանան, խոշոր բնակելի թաղամասերի կոմպլեքսային շինարարության խնդիրները շինարարության ինդուստրացման պայմաններում, այսինքն, երբ դրվում են քաղաքաշինարարական խոշոր պրոբլեմներ։

Թամանյանի թողած քաղաքաշինարարական հարուստ ժառանգությունը խոշոր նպաստ է մեր օրերի ճարտարապետների համար՝ սոցիալիստական ռեալիզմի հիմունքներով, բնության և պայմանների ճշգրիտ հաշվառումով, իրականություն դարձնել 6-րդ հնգամյա պլանով նախատեսված վիթխարի շինարարությունը։ Թամանյանի փորձի նոր օրինակով ապացուցվում է, որ մեր օրերի ճարտարապետը պետք է լինի նախ և առաջ քաղաքաշինարար։

Թամանյանից մենք շատ բան սովորեցինք և դեռ շատ բան ունենք սովորելու։ Այդ պատճառով նրանից ավանդ մնացած քաղաքաշինարարական ժառանգության քննադատական ուսումնասիրությունը մեր ճարտարապետության հրատապ խնդիրներից մեկն է հանդիսանալու։

Այս համառոտ ակնարկն Ալեքսանդր Թամանյանի մասին որպես քաղաքաշինարարի, ես ուզում եմ ավարտել մեր մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի խոսքերով՝ նվիրված մեծ ճարտարապետի կյանքի վերջին ակնթարթին.

...Նրա կոպերը երեկ երբ քարացել են խաղաղ—
Կապույտ բոցով բռնկված վերջին ջերմում ուղեղի,
Նա տեսել է երևի արևային մի քաղաք...
Ինչպես մաքուր մարմարի կապույտ կողին նկարած
Արևային ժամացույց՝ քարտեզն ահա քաղաքի,—
Պողոտանե՞ր, փողոցներ՝ բոլորաձիգ երկարած,
Իսկ կենտրոնում երկնահաս, դրանիտյա մի բագին։

Չարենցն այստեղ զարմանալի սրատեսությամբ նշմարում է Թամանյանի ստեղծագործության ուրույն բնույթը — քաղաքի և բագինի միասնությունը, այսինքն՝ Թամանյանի ստեղծագործության քաղաքաշինարարական էությունը։

Եվ, իսկապես, Թամանյանի ստեղծագործական թագի մեջ նրա քաղաքաշինարարական գործունեությունը, հատկապես Երևան քաղաքի հատակագիծը հանդիսանում է անգին քարերից մեկը, որ ինչպես շողշողուն մի աստղ լուսավորում է և հավիտյան պիտի լուսավորի մեծ արվեստագետի հանճարեղ ճակատը։